

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

ԹԻՖԼԻՍ. ՎԱՐՎԵՆՆԱԿԱՆ.—«Մի օր» վեպը ստացանք: Խնդրում ենք ուղարկել մեզ Ձեր հասցեն:

ՎԱՆ. Հ. Կ.—«Գարուն» բանաստեղծությունը չի տպւում: ՌՈՍՏՈՎ. Մ. Բ.—«Գրականություն և կեանք» և «Ներդեպ» ոսկեդար» յօդուածների տպագրությունը դադարեցրինք: ԲԱԳՈՒ. Մ. Բարխ.—Տպեցինք անտիպները, Միւսները տպուած են արդէն «Դիւաններում»:

ՇԱՌԼՕՏՏԻՆԲՈՒՐԳ. Ն. Վ. Թ.-Ա.—Կարգադրեցինք ուղարկել «Լուսման» և «Դիւանները» Ձեր ուղարկած հասցէներով: ՆՐԵՒԱՆ. Ս. Ի.—«Ճանապարհ» և «Նստ» տետրերը ստացանք և չենք կարող տպել: Պէտք է մի առ ժամանակ մշակէք Ձեր քանգարը. տպագայում երեւի աւելի կ'աջողի Ձեր:

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՈՒՍԱԵՐԷՆԻՅ Թարգմանություններ ուղարկողներին խնդրում ենք հետը միասին ուղարկել նաև ուսաերէն բնագիրները:

ԹԻՖԼԻՍ. Բ. Տ.-Գ.—«Բնութեան ծոցում», «Կնոջ գանգատը» և «Ջրկանք և բռնություն» բանաստեղծությունները ստացանք:

ԲԱԳՈՒ. Ս. Ա. Մեզ համար ոչ մի փարայի նշանակություն չունի, թէ ինչ են բարբառում դեկադէնտական հակութիւնը նոր դուրս պրծած «Բանբերները» և նոցա «Խնամակալները»:

Մեծ. բժկապետ Ս. Մայսուրեանցը առանձին թերթի վերայ տպել է հայերէն լեզուով «Խրատներ ականջի, բկի, կուրդի և քթի հիւանդություն ունեցողներին», որից 700 օրինակ ուղարկելով մեզ՝ խնդրել է ցրուել «Լուսնայ»-ի ներկայ համարի հետ: Խմբագրությունս այս համարի հետ ուղարկում է այն՝ իւր բոլոր բաժանորդներին թէ քաղաքում և թէ գաւառներում:

ԱԶԴ

Հարկաւոր ենք համարում յայտնել մեր ընթերցողներին և բաժանորդներին, որ ներկայ համարում տպուածով դադարում է Էյուլարդ Բէլլամիի «Հարիւր տարուց յետոյ» վեպի հայերէն թարգմանությունն տպագրութեան շարունակությունը: